



Մայրերու Օրուան նուիրում  
Ճաշկերոյթ եւ Ծիծաղի Երեկոյ  
Մենակատարութեամբ  
Վաստակաւոր բեմադրիչ եւ դերասան  
**Գրիգոր Սաթամեանի**

ՀԲԸՄի Մոնթրէալի Մասնաճիւղին պատմութիւնը հարուստ է «Մայրերու Օր»ուան նուիրում տօնակատարութիւններով, որոնց ընթացքին միշտ պատուում են Միութեան մէջ բացառիկ ծառայութիւն մատուցանող մայրերը:

Այս տարի, Մայիս 11-ին, մասնաճիւղիս հիմնադրութեան 50-ամեակին առիթով, ՀԲԸՄի Ալեք Մանուկեան Վարժարանի «Արշալիր եւ Նատիա Կէօնճեան» սրահին մէջ տեղի ունեցաւ «Մայրերու Օր»ուան տօնակատարութիւնը, եւ այս առիթով Լուս Աճճելըսէն յատկապէս հրաւիրուեցաւ վաստակաւոր բեմադրիչ ու դերասան Գրիգոր Սաթամեանը, որպէսզի գաղութէս ներս իր հինգ տարիներու բացակայութենէն ետք, ուրախացնէ հանդիսատեսները եւ յատկապէս ալ մայրերը իր իւրայատուկ մենակատարումով, ծիծաղաշարժ շարքով:

Պրն. Արմէն Պշաքճեան բացումը կատարելով օրուան տօնակատարութեան, բեմ հրաւիրեց Տիկ. Ծովիկ Ծաքարեանը, որ խոր ապրումով արտասանեց Պարոյր Սեւակի «Մօր Զեռքերը»:

Բազմամահարիր հանդիսականներ սոյն ձեռնարկին ուրախութեամբ ողջունեցին եւ յոտնկայս ծափահարեցին օրուան ազնուահոգի մայրերը, որոնք ՀԲԸՄի Մոնթրէալի Վարչութեան ատենապետ՝ Պրն. Արմէն Պշաքճեանի եւ Յիսնամեակի Յորելիսական Յանձնախումբի ատենապետ՝ Պրն. Պօղոս Քիշեանի միջոցաւ արժանացան ջերմ գնահատանքի եւ պատուուեցան ծաղկեփունջով մը:

«Պատուոյ Մայր»երու գնահատանքին արժանացան գաղութիս հետեւեալ մայրերը, որոնք իրենց անսակարկ նուիրումով մեծապէս գնահատած են մասնաճիւղիս աշխատանքները Մոնթրէալի գաղութէն ներս՝

Տիկիներ՝ Վարդուհի Ավաննէս, Մարի Գուլեան, Արաքսի Հաքիմեան, Ալիս Մանուկեան, Էլիզ Նահապետեան, Լիսի Պօղոսեան, Անի Սուքիասեան, Սիրվարդ Սուքիասեան եւ Մաքրունի Վասիլեան:

Մայրերու պարգևատրումէն ետք, օրուան յայտագիրը շարունակուեցաւ Գրիգոր Սաթամեանի յաջող եւ հետաքրքրական մենակատարումով, որ իրեն յատուկ հիմուրով եւ հաղորդականութեամբ, մեծապէս գնահատուեցաւ ներկաներուն կողմէ:

Պրն. Արմէն Պշաքճեան բեմ հրաւիրեց նաեւ Մասնաճիւղիս վարիչ-քարտուղարուհի Տիկ. Ռահել Ուրֆալեանը, որուն եւս պատուեց ծաղկեփունջով մը:

Զեռնարկի աւարտին, առ ի գնահատանք բեմադրիչ եւ վաստակաւոր դերասան Պրն. Գրիգոր Սաթամեանի բազմամեայ ծառայութեանց եւ Հայ բեմին զարգաման համար իր ընծայած մեծ ներդրումին, ՀԲԸՄի Գործադիր վարչութեան անունով Տիար Արմէն Պշաքճեան եւ Պօղոս Քիշեան յանձնեցին յուշանուէր մը Տիար Սաթամեանին:

Ներկայ մը